ռուցումը, որի կամարների մեջ սակայն հենց առաջին տասը տարվա ընթացքում գոյացան ճեղքեր[47]։

Տաթևի վանահայրը խանների ժամանակ և նրանց իշխանության վերացումից հետո մի երկու տասնամյակ բավականին անկախ կերպով տնօրինում էր Զանգեզուրի հայերի հոգևոր գործերը, սակայն վերջին հարյուրամյակի ընթացքում նա ոչ միայն արագ կորցնում էր իր նախկին նշանակությունը տեղական տնտեսական կյանքի մեջ, այլև իր իրավասությունը տեղական եկեղեցական գործերում։ Նրան վերապահվեցին գավառի սոսկ հաջորդի պարտականությունները և ըստ ամենայնի ենթարկեցին Երևանի թեմական առաջնորդին և նրան կից գործող հոգևոր կոնսիստորիային։ Ավանդական այն ակնածությունը և պատկառանքը, որը և՛ վանքի, և՛ նրա վանահոր հանդեպ շարունակում էր տածել տեղական հայ բնակչությունը, արտահայտվում էր դրամական և մթերային նվիրաբերությունների և տուրքերի՝ ուրիշ գավառների համեմատությամբ ավելի կանոնավոր և լրիվ հավաքման միջոցով։ Սակայն Տաթևի հաջորդության մեջ էլ հնարավոր չեղավ հոգևորականության շարքերը լրացնել մտավոր մակարդակով բարձր կանգնած անհատներով, չնայելով որ հոգևորականներն ու նրանց անմիջական ազգականները որոշ արտոնություններ էին վայելում, օրինակ՝ հարկատվությունից ազատ լինելու արտոնությունը։ 1886 թ. մարդահամարի տվյալներով այդպիսի արտոնություններից օգտվում էին 840 այր և 650 կին մարդ, ընդամենը 1.490 հոգի. մի քահանա սպասարկում էր 167 անձի[48]։ Ինչպես և այլ հայաբնակ գավառներում, հայ հոգևորականի նյութական կացությունը դրված էր շատ անհաստատ և տարտամ պայմանների մեջ նաև Զանգեզուրում։ Ավանդական մթերային հասույթները՝ կալապտուղը, տարեցտարի նվազում էին գյուղական տնտեսությունների մեծ մասի չքավորության հետևանքով։ Քահանան ստանում էր ցորեն՝ ծխից մեկ ու կես փութ կամ մի գլուխ տավարից 20—25 գրվանքա։ Վճարվում էր կալը թակելիս։ Միսակատարությունների համար հատուցվող գումարը շարունակ ենթարկված էր տատանումների[49]։ Գյուղական քահանայի եկամուտը վերջիվերջո կախված էր գլխավորապես նրա գյուղացիական պարապմունքից։ Բնականաբար նրա վրա էլ իր ամբողջությամբ անդրադառնում էր տընտեսության մանրացման այն պրոցեսը, որը ծավալվում էր ընդհանրապես գյուղացիության մեջ։ Նրա գերդաստանի մեջ էլ կատարվում էր մանր ընտա-

---

[47] 1931 թվի երկրաշարժի ժամանակ այդ զանգակատունն էր, որ ցնցումների հետևանքով շրջվելով Պողոս Պետրոս կենտրոնական տաճարի վրա՝ պատճառ դարձավ նրա գմբեթի և տանիքի տապալման։ Դիմացը՝ սարալանջին գտնվող Տանձատափ գյուղի բնակիչները պատմում են, որ գիշերը գետինը ոտների տակ գնաց՝ եկավ, լավեց սոսկալի դղրդոց. կարծեցին երկիրը պատրվել է։ Առավոտյան վաղ դուրս վազելով նոր բացվող լուսով դիմացը նայեցին՝ նրանց աչքի առջև արդեն չկար իրենց սովորական տեսարանը... կանգնած էր վանքը... բայց առանց բարձր զանգակատան և առանց տաճարի գմբեթի։

[48] Մահմեդականների մեջ հոգևոր կոչում ունեցողների և հարկատվությունից ազատված նրանց ազգականների թիվը հասնում էր 37 այր և 44 կին մարդու, միասին 81 անձի։ Մեկ մոլլան սպասարկում էր 1.760 անձի։

[49] Ըստ Զելինսկու հավաքած (տե՛ս էջ 109—110) և մեր կողմից ստուգված և լրացրած տեղեկությունների, քահանային վճարվում էր հետևյալ սակագնով. երեխայի մկրտությանը՝ 25—50 կոպ։ Հարսանիքին նշանի մատանու օրհնությանը՝ 1ռ. 50 կոպ.—2 ռ.։ Նորահարսի հանդերձի օրհնությանը՝ 25—50 կոպ.։ Պսակադրությանը, եթե փեսան նույն գյուղից է՝ 2—4ռ., եթե ուրիշ գյուղերից՝ 3—5 ռ., թաղմանը՝ 50 կ.—1 ռ. 50 կ., տեօրհնէքին-ծննդին, պատարագին՝ 50 կ.—1 ռ. 50 կ.։ Եկեղեցու օգտին վերցվում էր հավելյալ հատուկ վճար։